ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

09 » հոկտեմբերի 2019 թվականի N:240 ք.Գյումրի

ԿԱՐԵՆ ԲԱԴԻՇՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ, 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն .և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի փորձագետի 2019 թվականի հոկտեմբերի 7-ի գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինող, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բադիշյանին 2019 թվականի հոկտեմբերի 11-ին գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղվերան բնակավայր՝ «Բեսթ Վեսթերն Աղվերան» հյուրանոցում կայանալիք Դուալ կրթական համակարգի հետագա արդյունավետ ներդրման համար նոր կրթական ծրագրեր մշակելու և հետագա հանրային իրազեկումն ու հաղորդակցությունը ապահովելու վերաբերյալ աշխատաժողովին մասնակցելու նպատակով:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:
3. Կարեն Բադիշյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն

գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է